Հավելված N 479
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Ձեռներեցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքականության և ծրագրերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.19-Մ2-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության՝ այդ թվում նաև **փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ)** զարգացման պետական քաղաքականության մշակման և տնտեսության գերակայություններին համապատասխանեցման աշխատանքները,
2. իրականացնում է ձեռներեցության աջակցության գործիքների մշակման (այդ թվում նար ՓՄՁ-երի աճի ներառականության ապահովմանն ուղղված) և դրանց կիրարկման ապահովման ուղղությամբ աշխատանքներ,
3. Իրականացնում է միջազգային համագործակցության շրջանակներում գործող ոլորտային հարթակների աշխատանքների համակարգման աշխատանքները,
4. Իրականացնում է կանանց և երիտասարդների գործարար ներուժի զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծրագրերի մշակման և ներդրման, ինչպես նաև սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայմանն ուղղությամբ շարունակական աշխատանքներ,
5. Իրականացնում է ճգնաժամանային և հետճգնաժամային իրավիճակներում ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործուն մեխանիզմների մշակման և մշտադիտարկման աշխատանքները,
6. Իրականացնում է տեղական ընկերությունների ճանաչելիության բարձրացման, արտաքին

շուկաներում շահավետ դիրքավորման և այլ գործընթացներում ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացմանը ուղղված առաջարկների ձևավորման և ներկայացման աշխատանքները,

7. Իրականացնում է ոլորտային ռազմավարական փաստաթղթերի վերանայմանը, ինչպես նաև՝ դրանցով նախանշված նպատակների և գերակայությունների մասով բյուջետային և **միջնաժամկետ ծախսային (այսուհետ՝ ՄԺԾ)** ծրագրերի կազմման աշխատանքները:

Իրավունքները՝

- պահանջել համապատասխան մարմիններից անհրաժեշտ հիմնավորումները և փաստաթղթեր Հայաստանի Հանրապետությունում Ձեռներեցության՝ այդ թվում նաև ՓՄՁ պետական քաղաքականության մշակման համար,
- պահանջել շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ծրագրերի, ռազմավարությունների, նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական և ուղեցույցերի մշակման աշխատանքների վերաբերյալ,
- պահանջել համապատասխան մարմիններից ձեռներեցության զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ տեղեկատվություն.
- մասնակցել համապատասխան մարմինների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների հետ գործարար համայնքի հետ հետադարձ կապի ապահովմանն ուղղված աշխատանքների, իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների ստացման նպատակով կազմակերպվող քննարկումներին.
- պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային վարկային ծրագրերի մշակման նպատակով.
- պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և նյութեր հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների համար,
- մասնակցել պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությանն ուղղված համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին,
- ստանալ համապատասխան մարմիններից առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության ոլորտի քաղաքականության մշակման, տնտեսական զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել, վերլուծել և ամփոփել Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության՝ այդ թվում նաև ՓՄՁ-երի զարգացման պետական քաղաքականության մշակման և տնտեսության գերակայությունների վերաբերյալ մասնավոր հատվածից և պետական շահագրգիռ գերատեսչություններից ստացած առաջարկությունները.
- ուսումնասիրել և վերլուծել ձեռներեցության զարգացման պետական քաղաքականության մշակման և տնտեսության գերակայությունների վերաբերյալ մասնավոր հատվածից և շահագրգիռ այլ կողմերից ստացված առաջարկությունները և դիտարկումները, ամփոփել և ներկայացնել առաջարկություններ.
- մշակել ՓՄՁ-երի աճի ներառականությունն ապահովելուն ուղղված՝ յուրաքանչյուր անձի կարողությունների զարգացման և աճի արդյունքում ստեղծված տնտեսական

հնարավորությունների հավասար հասանելիության աջակցության գործիքակազմ,

- մշտադիտարկել ձեռներեցության աջակցության գործիքների կիրարկման արդյունքները,
- մշակել ձեռներեցության աջակցության վարկային, լիզինգային և փոխհատուցման պետական աջակցության ծրագրեր, հետևել ծրագրերի իրականացման ընթացքին, կատարել մշտադիտարկում.
- ուսումնասիրել և վերլուծել միջազգային համագործակցության շրջանակներում գործող ոլորտային հարթակների աշխատանքները"
- կազմել միջազգային համագործակցության շրջանակում գործող ոլորտային հարթակների աշխատանքների գնահատման վերաբերյալ հաշվետվություններ.
- աջակցել միջազգային համագործակցության շրջանակներում գործող ոլորտային հարթակների աշխատանքներին, քաղաքականության երկխոսություններին, ծրագրերի մշակմանը, ինչպես նաև դրանց արդյունքների գնահատման և հաշվետվողականության գործընթացներին՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ,
- ներկայացնել առաջարկություններ կանանց և երիտասարդների ստեղծարար ու գործարար ներուժի զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծագրերի մշակման և ներդրման գործիքակազմի և ձևաչափի վերաբերյալ,
- ամփոփել կանանց և երիտասարդների գործարար ներուժի խթանմանը միտված թիրախային աջակցության ծրագրերի վերաբերյալ մասնավոր հատվածից և շահագրգիռ գերատեսչություններից ստացված առաջարկությունները,
- օժանդակել սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայման ուղղությամբ շարունակական աշխատանքներին՝ մարզերում սկսնակ նորարար ձեռներեցների համար ֆինանսների, ձեռնարկատիրական հմտությունների ու կապերի, ինչպես նաև գիտելիքի հասանելիության բարձրացման միջոցով.
- մշակել և ներդնել Ճգնաժամանային և հետճգնաժամային իրավիճակներում ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործուն մեխանիզմներ.
- մշակել առաջարկություններ Հայաստանի ՓՄՁ-երի ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորմանն ուղղված՝ համագործակցելով ոլորտային ասոցիացիաների հետ,
- մշակել և ներդնել թիրախային խմբերի, այդ թվում պատերազմի հետևանքով հաշմանդամ դարձած քաղաքացիների համար սեփական աշխատանքով կայուն եկամուտ ունենալու նպատակով ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված աջակցության թիրախավորված գործիքակազմ.
- մշակել ձեռներեցության ոլորտում նորարարական գաղափարների, տեխնոլոգիաների ներդրման և գեներացման խրախուսման քաղաքականություն
- ուսումնասիրել արտաքին շուկաներում տիրող իրավիճակը, ամփոփել և ներկայացնել առաջարկություններ՝ տեղական ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման վերաբերյալ,
- ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել առաջարկություններ՝ տեղական ընկերությունների բիզնես կառավարման, բրենդինգի, միջազգայնացման, ֆինանսական պլանավորման, կորպորատիվ կառավարման սկզբունքների ներմուծման, առավել բարձր հավելյալ արժեքի ստեղծման և այլ գործընթացներում ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացման վերաբերյալ.
- ներկայացնել առաջարկություններ ոլորտում առկա խնդիրների այլընտրանքային

լուծումների վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում մշակել ձեռնարկատիրության սուբյեկտների աջակցության նոր գործիքակազմ.

- ուսումնասիրել ոլորտային ռազմավարական փաստաթղթերը և համապատասխան տեղեկատվությունը, ամփոփել արդյունքները և ներկայացնել առաջարկություններ բյուջետային և ՄԺԾ ծրագրերի կազմման ընթացքում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: